



52. Մ Ա Ր Դ

Անպետք ու անբան տղի մե շատ կը հեռուտցու պապուն ու մամուն, պապն չըմեն հաղ կըսե.

— Մա՛րդ էդի:

Կռիվ կը փրցնա մըջ էրկու թագավորներուն, աղին կը տանի՝ ասկար, մըջ կուվուն քաջութեն ցուց կիտա, թագավոր զըդի կը դառնա նազիր, ձեն գիկա հասնի պապուն, պապ կըսե.

— Նազիր, թե վազիր՝ մեկ է՝ մարդ չէ՛:

Ժամանակ մե քետե՛ տղեն զշորեր կը փոխե, գիկա ուր պապուն ու մամուն տեսութեն: Պապն ու մամ զէդի շըն ճանչնա, կը նստին, կը խոսան, կը գանգտին, օր տղեն դառներ է նազիր, լե ծեր ծնողայ քերես շիշե:

— Մարդ էղնել՝ կիշեեո.— կրսե պապ:

Կէղնի օր էրկրի թագավոր կը մնունի, նազիր կը դառնա թագավոր, գելնա զշորեր կը փոխե, գիկա պապուն ու մամուն տեսութեն: Տղեն կը տեսնա՝ հմա՛լ ին աղքըտցի, խըղճըցի, անջախ կը քելին: Տղեն ուրին կը ճանչցու, կըսե.

— Պա՛պ, ընձի կը փնովե՛ր՝ տեսա՛ր թագավո՛ր դառձա:

Պապն զգլուխ կը տանե բերե, կըսե.

— Թագավոր իս դառձի, հմա մա՛րդ չըս դառձի:

